

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՑՈՒՄԻՆԻՍՏԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՒԹԻՒՆ

Լրագիրները հետեւեալ գաղափարներն են անուամբ Ռուսաստանի, Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի համերաշխ քաղաքականութեան մասին:

Մինչև այժմ ոչինչ յայտնի չէր «երեք կայսերութիւններ» քաղաքականութեան մասին: Յայտնի չէր մինչև անգամ արդեօք գոյութիւն ունէր այդպիսի քաղաքականութիւն: Վիճելով կայսրի վերջին գահակալ ճառը առաջին անգամ յիշեց ամենքից մոռացված «երեք պետութիւնների դաշնակցութիւնը», նրան եւրոպական խաղաղութեան գրաւական անուանելով: Գերմանիան վաղուց բարեկամ է Աւստրո-Ունգարիայի և Ռուսաստանի հետ, բայց այդ երեք պետութիւնները չեն ունեցել և չեն կարող ունենալ քաղաքական ընդհանուր ուղղութիւն, որովհետև նրանց միջազգային շահերը շատ տարբեր են: Երեք կայսրերի համաձայնութիւնը կայացել է քաղաքական որոշ և զբաղան նախագիծ բացակայութեան վրա, որովհետև այդ համաձայնութիւնը շուտով կանհետանար, հէնց որ զորմանական պէս կը յարուցվէր այն հարցերից մէկը, որով հետաքրքրվում է եւրոպական հասարակական կարծիքը: Այնու ամենայնիւ գերմանական կայսրը յիշում է «երեք կայսրութիւնների քաղաքականութիւնը», հետեւապէս նա գոյութիւն պէտք է ունենայ, գոնեա հէնց այն նպատակով, որ այդ հանգամանքը ի նկատի առնեն Ֆրանսիայի գործունեայ նոր միջնորդները:

Կայսրերի անձնական յարաբերութիւնները, որոնք աւելի էլ բարեկամական դարձան Գաշտէյնի և Գանցիգի մէջ կայացած տեսութիւններից յետոյ, չեն կարող ապացուցանել երեք պետութիւնների դաշնակցութիւնը: Այդպիսի դաշնակցութեան մասին ամենից շատ խօսվում էր ռուս-թուրքական արիւնհեղ պատերազմից առաջ: Այն ժամանակ այդ դաշնակցութիւնը աւելի ամուր էր երևում և առիթ չը կար կասկածելու, որ նա չի պահպանի եւրոպական խաղաղութիւնը: Բայց հէնց որ զբաղան միջոցների գործադրութիւն պահանջող հարց բարձրացաւ, դաշնակցութիւնը երևակայական յայտնվեցաւ և պետութիւններից մէկը շատ լնայ գին վճարեց իր հաւատարմութեան համար: Այդ դառն փորձից յետոյ երեք պետութիւնների դաշնակցութեան միտքը կորցրեց իր նշանակութիւնը: Այժմ քաղաքական այդ ուրուականը նորից հանգես է գալիս և խոստանում է պահպանել միջազգային հանգստութիւնը: Աւելորդ չէ ուրեմն քննել այդ դաշնակցութեան նշանակութիւնը, որի թելերը Բերլինի մէջ են:

Վիճենայի մէջ ունդարական ազգային ժողովի նիստերի ընթացքում հետաքրքիր վիճարանութիւններ էին կատարվում գինւորական բիւզետի վերաբերութեամբ: Չերնաւոնի պատգամաւորը կառավարութեանը շատ քնական հարց առաջարկեց. ի՞նչ է պատճառ, որ այն ժամանակից, երբ Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի յարաբերութիւնները ամենամոտեմական են դարձել, վերջինի պատերազմական ծախսերը հետզհետեւ աւելանում են, երկրին սնանկութեամբ սպառնալով: Ի՞նչ միտք ունի դաշնակցութիւնը գերմանական հզօր կայսերութեան հետ, եթէ այդ դաշնակցութիւնը չէ քննադատ գործերի և գինւորական համար պահանջվող ահագին ծախ-

սերը: Եթէ կառավարութիւնը հաւատում է Գերմանիայի բարեկամութեանը և պաշտպանութեանը, ուրեմն առիթ չը կայ երկու կրկնու, որ Աւստրիայի վրա կը յարկաւորվեն, հետեւապէս գինւորական ծախսերը կարելի է կիսով չափ փոքրացնել: Վերջապէս գերմանական կառավարութեան հետ բարեկամական յարաբերութիւններ ունենալով, Ֆրանսիոյ-Յոլանդի կայսրի խորհրդատուները կարող էին հարց բարձրացնել գինւորականութեան մասին: Այդ կատարելապէս իրաւացի հարցերը նոյն վիճակի ենթարկվեցան, ինչ վիճակի ենթարկվում են եւրոպական պարլամենտի մէջ խաղաղասիրական ցոյցերը: Չերնաւոնի պատգամաւորին բացատրեցին, որ Աւստրո-Ունգարիան միւս պետութիւններից յետոյ չէ կարող, որ նա պէտք է գինւորվի, քանի որ ուրիշները գինւորվում են և վերջապէս, որ Աւստրիան չէ կարող առաջինը հարց բարձրացնել գինւորականութեան մասին: Ուրեմն ի՞նչ նշանակութիւն ունի այդ «դաշնակցութիւնը», որի մասին այդքան խօսում են թէ Գերմանիայի և թէ Աւստրո-Ունգարիայի մէջ: Միջնորդական անուղղակի պատասխանները ցոյց են տալիս այդ դաշնակցութեան նշանակութիւնը, որ հիմնված է անհատարմութեան և երկուսի վրա:

Մինչդեռ եթէ համեմատաբար նայենք հարցին, Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի յարաբերութիւնները ամենաբարեկամական են: Բերլինը և Վիեննան կապված են բազմաթիւ ընդհանուր շահերով և երկուսից մասը Աւստրիական կառավարութիւնը, իր ետեւից Գերմանիան ունենալով, ըստ երեւոյթի ազատութեամբ կարող է իրագործել իր ընդարձակ նախագիծերը: Բալկանեան թերակղզու վերաբերութեամբ: Բայց այնու ամենայնիւ Աւստրիան իր ոյսիւրի վրա պէտք է յոյս դնէ, ի նկատի ունենալով զանազան թշնամական տարրեր, այնպէս որ Բերլինի բարեկամութիւնը Աւստրիային նոյնքան լնայ կարող է նստել, որքան լնայ նստեց Ռուսաստանին արեւելեան դժուարութիւնների ժամանակ: Այն էլ պէտք է նկատել, որ Աւստրիական գործիչները շատ չեն հաւատում այդ դաշնակցութեանը, թէպէտ աշխատում են ուրիշներին էլ իրանց հետ միացնել:

Վիեննայի մէջ շատ լաւ հասկանում են, որ այդ դաշնակցութեան նպատակն է պետութիւններից մէկի առաւելութիւնը: Ներք պետութիւնների դաշնակցութեան անուան տակ իշխան Բիսմարկ կենտրոնացնում է Բերլինի մէջ եւրոպական քաղաքականութեան բոլոր թելերը: Միջազգային դաշնակցութեան անունով ընդհանրապէս է միայն Գերմանիայի հզօրութիւնը և փառքը, իսկ միւս պետութիւնները հաւատարիմ ուղեկիցների դերեր են կատարում, զրկված լինելով գործողութիւնների ազատութենից և ստիպված լինելով հետեւել իշխան Բիսմարկի խորհուրդներին: Այդ է գերմանական կանցլէրի իդէալը, որ չէ իրագործված մինչև անգամ Աւստրիայի վերաբերութեամբ: Ազգութիւնների կազմակերպութեամբ և իր աշխարհագրական դիրքով Հաբսբուրգների կայսրութիւնը կախում ունի Գերմանիայից և Աւստրիական կառավարող անձանց հաւատարմութիւնը դէպի Բերլինի բարեկամները շատ հասկանալի են: Աւստրիան ինքն ըստ ինքեան անգոր է արտաքին գործերի մէջ: Նա կարող է ուժեղ լինել միայն այն ժամանակ, երբ համաձայն է գործում Գերմանիայի հետ: Աւստրիան վաղուց տանում է ֆինանսական պակասութիւններ, որոնք տարի տարի

աւելանում են: Աւստրիային սպառնում է պետական սնանկութիւն, եթէ նա կառաւարայ մեծ պետութիւններին կից ահագին ծախսեր անելով գինւորական համար: Ներքին և արտաքին այսպիսի դժուար պայմանների ժամանակ արդեօք կարելի է ինքնուրոյն արտաքին քաղաքականութիւն: Ահնեւե է, որ չէ կարելի:

Ուրեմն երեք պետութիւնների դաշնակցութեան նպատակն է այդ պետութիւնների քաղաքականութիւնը Բերլինի մէջ կենտրոնացնել: Ամենքի համար հասկանալի է, որ Ռուսաստանը չէ կարող մասնակցել այդպիսի դաշնակցութեանը, որ Աւստրիայի համար անհրաժեշտութիւն է:

ԳԵՐՄԱՆԻԱ

Նոյեմբերի 17-ին կէս օրից յետոյ ժամի 2-ին կայսերական պալատի սպիտակ դահլիճի մէջ կայացաւ գերմանական լայնատաղի հանդիսարար բացումը: Նշանակված ժամին եկաւ թագաւորականը, և մտաւ դահլիճը ուղեկցութեամբ կայսերական տան անդամների, միացեալ խորհրդի անդամների, իշխանների և գեներալների թագաւորականը իր սկիւղով կանգնեց դահլիճի կողմը, իսկ աջ կողմը կանգնած էին իշխան Բիսմարկ, Բալթիկայի և Սկանինայի զինվորները և միացեալ պետութեան այլ ներկայացուցիչները: Թագաւորականը զուլստուեց լայնատաղի անդամներին, որոնք հաւաքվել էին մեծ բազմութեամբ: Այնուհետեւ իշխան Բիսմարկ, յայտնելով կայսրի ցաւակցութիւնը, որ հիւանդութեան պատճառով ինքը անձամբ չը կարողացաւ բանալ լայնատաղը, սկսեց դահլիճի ճառի ընթերցանութիւնը: Բիսմարկ գահական երկար ճառը կարդաց հաստատ և բարձր ձայնով, շնչաւորով մանաւանդ այն կէտերը, որոնց մէջ յիշված էին սօցիալ-քաղաքական մտադրութիւնները և Գերմանիայի բարեկամական յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ: Պատգամաւորները լռութեամբ լսում էին ճառը առանց հաւանութիւն յայտնելու: Զառի ընթերցանութիւնը աւարտելուց յետոյ իշխան Բիսմարկ աւելացրեց. «Կայսրի և միացեալ կառավարութիւնների անունով լայնատաղի նիստերը բացված են յայտնում»: Այդ խօսքերը արտասանելուց յետոյ Բիսմարկ զուլստուեց պատգամաւորներին, որոնց առաջ կանգնած էին ֆելդմարշալ Մոյսկէ, Վիրխով, Լասկեր, Բենիգսեն, Շտեֆկէր և այլն: Գլխավորապէս տեղերը լի էին: Ռուսաց և Աւստրիական զինվորները եկել էին իրանց ամուսնիների հետ:

Գերմանական սօցիալիստների յայտնի առաջնորդներ Բերկ և Լիբկնիխտ մի հետաքրքիր յայտնութիւն հրատարակեցին: Բերլինի ընտրութիւնների մասին Յայտնվում է, որ պահպանողականները սօցիալիստներին խոստանում էին դաշնակցութիւն օգնութիւն սօցիալիստների մասին օրէնքի դէմ, եթէ նրանք համաձայնվէին պաշտպանել իշխան Բիսմարկի տնտեսական քաղաքականութիւնը: Սօցիալիստները մերժել են այդ առաջարկութիւնը, չը կամենալով միանալ յետադիմականների հետ և իշխան Բիսմարկի քաղաքականութիւնը բանաւորների համար փնտաւոր համարելով: Այդ յայտնութեան հեղինակները խոստովանում են, որ թէպէտ սօցիալ-դեմոկրատների շատերը հոկտեմբերի 27-ին քուտուէին առաջադէմների ներկայացուցիչ, բայց նրանցից բազմութիւնը քուէարկեց պահպանողականների կանգիդատին:

ՖԻՆԱՆՍԻԱ

Միջնորդական զամբնուա պատգամաւորների ժողովի մէջ կարդաց իր կառավարութեան հետեւեալ պրօգրամը:—1875 թուականից յետոյ ընդհանուր քուէարկութեամբ ժողովուրդը, իր բարձրագոյն կամքը արտայայտելով, ցանկութիւն յայտնեց հաստատել հանրապետութիւնը և շրջապատել նրան ժողովրդական հիմնարկութիւններով: Հանրապետութեան նախագահի հաւատարմութեամբ հրաւիրված լինելով նոր միջնորդութիւն կազմելու համար, մենք ուրիշ նախագիծ չունենք, բացի այն, որ Ֆրանսիան է ցանկանում երկիրը ցանկանում է, որ վերանորոգական քաղաքականութեան գործիքը միաձայն, ճշունեներից և թուլութիւններից ազատ կառավարութիւն լինի, մի կառավարութիւն, որ մշտապէս պատրաստ լինի քննել ժողովրդի շահերը: Նրա ներկայացուցիչների հետ և նրանց իր գործողութիւնների հաշիւը տալ: Մի կառավարութիւն, որ կարողանայ ներշնչել վարչութեան անդամներին հնազանդութիւն պարտականութեանը և պարտաճանաչութիւնը: Կառավարութիւնը յոյս ունի երկու ժողովների մէջ էլ ազատ մեծամասնութեան օգնութեան վրա, նա յոյս ունի, որ հասարակութեանը ծառայող մարդիկ մի անկաշառելի վարչութիւն կը կազմեն, որ նրանք չեն ենթարկվի անձնական ճշմանը և ազդեցութեանը, որ նրանք հաւատարիմ կը լինեն հայրենիքին: Մեր միջնորդութեան առաջին գործը կը լինի սահմանադրական օրէնքների շափաւոր վերաքննութիւնը, որպէս զի պետական առաջնորդող հիմնարկութիւններից մէկը համապատասխանէ մեր հասարակութեան ժողովրդական ոգուն: Այնուհետեւ մենք կը շարունակենք ժողովրդական կրթութեան գործի բարեօրոգումը, որ մեծ ազդեցութեամբ սկսեցին մեր նախորդները:

Մենք կը վերջացնենք մեր պատերազմական օրէնքներով բարեկաւելը: Մեր կառավարութիւնը կաշխատէ փոքրացնել ծովային և ցամաքային պատերազմական զորքի պահելու համար հարկաւոր ծախսերը, առանց փնտաւոր երկրի ֆինանսական դրութեանը: Մենք ի նկատի ունենք մի քանի առեւտրական դաշնակցութեան և որոնք կօգնեն մեր արդիւնաբերութեան և առեւտրի զարգացմանը: Իբրեւ ժողովրդի ներկայացուցիչներ, որոնք առաջնորդվում են արդարութեան և համերաշխութեան ոգով, մենք կը նպաստենք այն հիմնարկութիւնների զարգացմանը, որոնց նպատակն է սօցիալական պէտքերի ապահովութիւնը: Կենդանութեան խիստ իրագործութեամբ կառավարութիւնը կապահովէ յարգանք դէպի իշխանութիւնը, որ հսկում է եկեղեցու և պետութեան յարաբերութիւնները: Վրա Պահպանելով հասարակական ազատութիւնը, կառավարութիւնը կը պաշտպանի երկրի ներքին կարգապահութիւնը և արտաքին արժանաւորութիւնը, որպէս զի կարողանայ իրագործել նախագիծ վերանորոգութիւնները: Օրէնսդրական այս շղթան ընթացքում մենք զբաղված կը լինենք այդ վերանորոգութիւններով, յուսանելով այս ժողովի հանրապետական և օգնականների հաւատարմութեան և օգնականների հաւատարմութեան: Մենք ներկայանում ենք ժողովրդի ընտրեալներին, վճարով ծառայելու իրանց մեր բոլոր ուժով և գործունեութեամբ: